

ՀԵՐՈՂՈՏՈՍ

(Տես առաջին մասը էրես 20 :)

Հերոդոտոս իբրև մատենագիր : —
Հերոդոտոս ճարտարախօս կոչուած մա-
տենագրաց ամենեկին չնմանիր . չգիտեր
թէ ինչ է ոճ (style) ըսուածը . կամ
թէ ըսենք չգիտեր ամենեկին իմաստից
և բառից կարգը , և այն ճարտար յար-
մարաբանութիւնը որ ընտիր և զարդա-
րուն հիւսուածք մը կ'ընծայէ գրու-
թեան : Իր մտածութիւնը կը խօսեցընէ ,
ահաւասիկ բովանդակ իր արուեստը .
պարզ և անշուք բառեր , բնական դար-
ձուածքներ գրուածքին սկիզբէն ին-
չուան վերջը կը տեսնուին : Հերոդոտոս
յոնիական լեզուով գրած է , բայց բնա-
կան և անբռնազբօս ոճով , և ոչ թէ
Պլատոնի պէս որ ատտիկեցի բարբա-
ռով գրեց՝ սակայն վերջի աստիճան ա-
րուեստի ճիգն թափելով : Հերոդոտ
գրեց ինչպէս որ կը խօսէր կամ թէ ինչ-
պէս կարելի էր խօսիլ . ասկից են այն
իմաստները որ կարծես թէ ոչ սկիզբն
և ոչ վերջ և ոչ ալ ճշմարիտ կազմու-
թիւն մը ունին , և չեն կրնար բացատրել
կատարելապէս Հերոդոտոսի միտքը :
Իսկ գրուածքին շնորհքը միայն այսպէս
կանոնաց դէմ պատշաճ զարտուղու-
թիւններ ընելուն վրայ չէ , այլ նոյն իսկ
գրած լեզուին բնութեանը վրայ է : Յու-
նիական լեզուն ձայնաւորներուն և երկ-
բարբառներուն շատութեամբ և բա-
ռերուն ունեցած բանաստեղծական ի-
մաստներովը՝ Հերոդոտոսի գրուածքին
յատուկ օժումն տուած է , և ընդհանուր
երկասիրութեան կատարելութեանցը
հետ շատ լաւ յարմարած է : Հերոդոտ
իր գրութեանը կը թողու որ դէպքերը
իրենք իրենցմէ ընթերցողին հետա-
քըքրութիւնը զարթուցանեն և սիրտը
շարժեն . անանկ որ շատ դժուարին է
որոշելը թէ որն է այնչափ անթիւ պատ-
մած դէպքերէն իբրև ըստ գրութեան
ոճոյ ամենէն ընտիրը :

Հերոդոտ թարգմախօս : — Հերոդոտ

միայն պատմելու համար գրած չէ . ըս-
տէպ ստէպ մարդկային գործոց վրայ
խորհելով՝ բարոյական խրատներ կը
հանէ . կ'ուզէ ցուցընել թէ աշխարհ-
քիս վրայ գերագոյն զօրութիւն մը կայ
և անիկայ է որ կը գործէ . ամենայն ինչ
'ի յաւիտենից կանոնաւորեալ կը հա-
մարի , և թէ աստուածները վրէժխն-
դիր են յանցանաց , բռնաբարութեան
և չափազանց ճոխութեան և ունայնա-
սիրութեան : Ասով չենք կրնար ըսել
թէ Հերոդոտ մեծ փիլիսոփայ է , կամ
թէ Քրիստոսէ հինգ դար առաջ հնա-
րեց փիլիսոփայական պատմութիւնը .
այլ միայն կ'ըսենք թէ գիտէ խորհր-
դածել և համեստ սրտիւր ունի նաև
երբեմն ճշմարիտ և խորին դաղափար-
ներ . շատ լաւ կը գգայ բարին և չարը
զանազանել մէկմէկէ , և ոչ երբէք մէ-
կուն ըրած չար գործքերը կ'արդարա-
ցընէ կամ երևելի մարդկանց առաքի-
նութիւնները կը պախարակէ : Պատ-
մութիւն գրելը իրեն համար ջատագո-
վութիւն գրել ըսել չէ . բնաւ կողմ
չբռներ , այլ միայն արդարութիւն և ա-
ռաքինութիւն կը սիրէ . նոյն իսկ Յու-
նաց պակասութիւնները չծածկեր , և ա-
նոնց փառաւորութեանը հետ կը ցու-
ցընէ միանգամայն թէ ինչ պատճառ-
ներով հետզհետէ պիտի կորսնցընէին
իրենց զօրութիւնը :

Հերոդոտոսի գրուածքին գերազան-
ցուքիշներ : — Հերոդոտոս կրօնասէր էր՝
բայց ոչ թէ դիւրահաւան : Տեսակ տե-
սակ պատմեցիկներ կը պատմէ , այլ միշտ
անանկ կերպով որ պատասխանատուու-
թիւնը ուրիշի վրայ կ'իյնայ : Ամեն ըսա-
ծը ճշմարտապատում է . ինչ որ տեսեր
եմ կամ լսեր եմ , կ'ըսէ , իրօք անձամբ
տեսած կամ լսած է . չենք ալ կրնար
իբրև միամիտ տարակուսիլ վրան , ինչ-
պէս եղան ոմանք՝ որոնցմէ մէկն է նաև
Պլուտարքոս՝ որ նախապաշարեալ մըտ-
քով Հերոդոտոսի ամեն նորօրինակ
պատմած բաները առասպել սեպեցին :
Արդի ճանապարհորդներ իրենց հետա-
զօտութեամբ յայտնի ըրին Հերոդո-
տոսի շատ պատմածներուն ճշմարտու-

թիւնը, և օր ըստ օրէ հնախօսական
զիւտերն, արևելեան քաղաքաց աւե-
րակներուն մէջ ծածկուած շէնքերն և
կարգացուած հին գրութիւններն, որ
նոյն ժամանակի պատմութեան ստու-
գութեանը վկայքն են, հաւաստի կեր-
պով կը ծանուցանեն մեզի որ հերոգոտ
ոչ միայն ազգաց պատմութեան և ժա-
մանակագրութեան տեղեկանալու ամե-
նայն ջանք ըրեր է, այլ ինքնին անոնց
երկիրները այցելութեան ելեր և սովո-
րութիւններն զիտեր է: Վերջապէս Հե-
րոգոտոսի այս երկասիրութիւնը որ ար-
ժանապէս պատմական առաջին գը-
րուածքը կը սեպուի, ոչ միայն վերա-
դասելի է քան զուրիշ պատմագրու-
թիւնս՝ այլ նաև իրեն սեռին մէջ առան-
ձին սեպհական գրուածք մըն է. և եթէ
չըսենք ալ ամենակատարեալ, գոնեա
ամենազարմանալի է, իսկատիպ և բո-
լորովին բեղնաւոր հանճարոյ արդիւնք:

ՀՈՌՎԾԱՅ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ուրախութիւնն ըստ ինքեան չբա-
ցատրուիր, որովհետև տխրութեան պէս
սեւեռումն չէ նիւթի մը վրայ. այլ ինք-
նաբեր մղում մըն է՝ որ բիւր կերպ կեր-
պարանք և զգացմունք կ'առնէ. և սաս-
տիկ հաղորդական ըլլալով, ելքտրա-
կան բոցով կը վառէ ուր որ բազմու-
թիւն 'ի մի խոնած է: Անոր համար գը-
րով բարեկենդան մը ուզել ստորագրե-
լը՝ այն պատերազմական նկարուց կը
նմանի, որոնց մէջի կտրիճներուն թու-
րերը կամ ցլաւիտեանս օգուն մէջ կը
շողան, կամ թշնամոյն վզին վրայ քա-
րացած են: Բարեկենդան ըսելը՝ աղա-
ղակ, խառնակութիւն, ծիծաղներու գո-
ռում գոչում, անբաւ զանազանութիւն
ձայնից՝ շարժուածոց և զուարճութեան
անթիւ փոփոխութիւն, միով բանիւ
բարեւոն մը խառնակութեան ըսել է:
Բարեկենդանի մը գաղափարը կ'ուզէք
առնելնէ, ելէք Հոռոմ երթանք. աչքով

տեսնելը՝ նկարագրութեան չնմանիր,
մասնակից կ'ընէ զմարդ ուրիշի ուրա-
խութեանը:

Կրկէս ըսուած փողոցը նեղ ու եր-
կայն՝ մղոնի մը երկայնութիւն կը բռ-
նէ. երկու կողմէն բարձր պալատներ
կարգ կարգ պատշգամբներով զարդա-
րուած են. մէկ ծայրը Ժողովրդեան
հրապարակը կը հանէ, որ մայրաքաղա-
քին գեղեցկագոյն մուտքն է, իսկ միւս
ծայրը կ'աւարտի վենետկոյ հասարա-
կապետութեան հին զղեկաձև պալա-
տը, որ այսօրուան օրս Աւտորիական
պետութեան ձեռքն է: Կէսօրուրնէ ետ-
քը բազմութիւն քաղաքացեաց և օտա-
րականաց պատշգամբներն և պատու-
հանները կը թափի. իսկ վարը փողո-
ցին մէջ երկու կարգ կառքեր ծանր
ծանր կը պտըտին: Շատ մը կառաց հե-
ծեալքն ազնուական պարզութեամբ
հագուած՝ հանդիսատեսաց աչքին երև-
նալ միայն կ'ուզեն. այլք, որոց մեծ
մասն օտարականք են, չաքարեղէն կամ
անոր նմանութեամբ ձևացուցած գաճ
կը ցանեն չորս դին. երբեմն ալ պատու-
հաններէն վեր ծաղկի աղուոր փնջիկ-
ներ կը նետեն, որոնց փոխարէն շատ
անգամ իրենց վրայ ալ գոյնզգոյն ծաղ-
կունք կ'անձրևեն: Ասոնց մէջ այնպիսի
ոգելից երիտասարդք կը գտնուին, որ
ոտքի վրայ ելած՝ անհնարին արագու-
թեամբ ուրիշներուն վրան գլուխն ծած-
կել կը ջանան գաճով: Սակայն բուն ժո-
ղովրդեան ուրախութիւնն ու բարեկե-
դանը ներկայացընող կառքերն անոնք
են, որոնց մէջ ամեն տեսակ այլանդակ
դիմակաւոր կերպարանքներ խառնի-
խառն մտած են. ո՞ր մէկը զուրցեմ,
մէկն առանց աղեղի նուագարան կը
զարնէ, մէկը փղի կնճթին չափ երկայն
քթով փաստաբանութիւն կ'ընէ, միւսը
չոր տերևով դեղավաճառ ինքզինքը կը
քարոզէ, ուրիշ մը թուլիկեղջյուի հա-
գուստը մտած գոյնզգոյն զգեստով և
սրածայր գլխարկաւ՝ անդամներու կո-
տրտուածքներով խեղկատակութիւն-
ներ կ'ընէ. ոմն կանգնաչափ փայտերու
վրայ ելած՝ կը պարպէ դինուոյ շիշն ու